# ՄՈՍԿՎԱՅԻ Մ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (X-XII դասարան)

**ՀԱՐԳԵԼԻ՛ ԴԻՄՈՐԴ**

**Ընդունելության թեստը բաղկացած է *3* մասից*:***

***I* մասը գնահատվում է *10* միավոր, ընդգրկված է *5* հարց, յուրաքանչյուրը գնահատվում է *2* միավոր*:***

***II* մասը գնահատվում է *30* միավոր*:* Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել *15* առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է *2* միավոր*:***

***III* մասում առաջարկվում է փոխակերպել տրված նախադասությունները և կազմել գծապատկեր*:* Առաջադրանքը գնահատվում է *10* միավոր. յուրաքանչյուր առաջադրանքը գնահատվում է *2* միավոր*:* Փոխակերպումներում թույլ տրված ուղղագրական կամ կետադրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է *0.1* միավոր, գծապատկերը կազմելիս նախադասությունը չհամարակալելու համար՝ *0.5* միավոր*:***

**Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների*:***

**Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է *120* րոպե*:***

## ՄԱՍ I

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.**

Խա__տել, չղ__իկ, ձվա__եղ, որ__ատունկ, վար__ագիծ, սրտատրո__, եղ__ամ, խոչ__նդոտ, օր__րոց, բացօ__յա:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Վերականգնել տրված բառերի հնչյունափոխված արմատների անհնչյունափոխ տարբերակները.**

Թռչուն _____

Փրփրադեզ_____

Ըմպանակ_____

Հոգեզավակ_____

Մթնկա_____

Քննություն_____

Հպանցիկ_____

Ձգան_____

Սփռվել_____

Ստուգարք_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.**

Ընդ (առաջ), առ (այսօր), առ (ժամանակ), ի (նշան), ըստ (ամենայնի), խառնի (խուռն), գլուխ (կոտրուկ), գեներալ (գնդապետ), ծայրից (ծայր), արևմուտքից (արևելք).

_____

_____

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.**

ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐ, ԴԵՂԻՆ ԾՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐ, ԱԲՈՎՅԱՆ ՊՈՒՐԱԿ, ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՁԲՈՍԱՅԳԻ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Կետադրել.**

Մի երիտասարդ դիմանկարիչ որ բոլորովին տաղանդ չուներ թեև ինքը հակառակ կարծիքին էր և գործերն էլ վատ էին տխուր նստել էր արվեստանոցում: Նրա կողքին

նստած էր կինը երիտասարդ ֆրանսուհին: Արդեն որքան ժամանակ է ոչ ոք չէր գալիս արվեստանոց և երիտասարդ զույգը մնացել էր առանց ապրուստի միջոցի: Հարևանը խելամիտ մի մարդ խորհուրդ տվեց նկարել հենց իրենց:

## ՄԱՍ II

## Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

**(1)** Օվկիանոսի մոլեգնող տարերքի վրա բարձրանում է ոսկեվարս արեգակը, որի վառ նարնջակարմրավուն ճառագայթների ներքո տարրալուծվում է մութը, և արդեն տարտամորեն տարորոշվում է այն, ինչ քիչ առաջ թաքնված էր խավարի թագավորության սեփ-սև քողի տակ: **(2)** Արևը, կենսառաք, հրաշեկ արևը՝ կյանքի աղբյուրն ու խորհրդանիշը, դանդաղընթաց բարձրանում է սահմռկեցնող կապտականաչ ալիքների՝ առյուծի բաշեր հիշեցնող բլուրների հետևից՝ ասես սանձելու ինքն իրեն կորցրած ըմբոստ օվկիանոսի զայրույթը: **(3)** Սակայն դյուրին չէ միանգամից կանգնեցնել խորդուբորդ ընդերքից ժայթքող դժոխային ուժերին, որոնք, թվում է, անթաքույց հրճվանքով ձգվում են դեպի երկինք՝ ներքևում գոյացնելով խավարչտին խորխորատներ:

**(4)** Բայց զարհուրելին դեռ առջևում է. այդ նա է՝ իններորդ ալիքը՝ ամենամեծը, ահասարսուռը: **(5)** Սանձակոտոր առաջ նետվելով՝ այն ահա ուր որ է փլչելու է նավաբեկյալների վրա:

**(6)** Ովքե՞ր են ալեհույզ տարերքի երախում հայտնված այդ անհույս, տանջալլուկ մարդիկ:

**(7)** Երեկ, երբ լուսնկայի շողերի տակ օրորվող շոգենավը դուրս եկավ նավահանգստից, պարզկա, անդորր երեկո էր: **(8)** Նավապետը քննախույզ հայացքով չափեց հեռուները՝ դույզն իսկ չգուշակելով, թե ընդամենը մի քանի ժամ հետո ընկնելու են խելակորույս փոթորկի մեջ:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. *1*-ին նախադասությունից դուրս գրել *4* ածական.**

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. *2*-րդ նախադասությունից դուրս գրել *2* անկախ դերբայ և որոշել տեսակը.**

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. *2*-րդ նախադասությունից դուրս գրել սեռական հոլովով դրված *4* գոյական.**

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. *3*-րդ նախադասությունից դուրս գրել *1* մակբայ, *1* շաղկապ, *1* կապ, *1* դերանուն.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Որոշել** փչելու է **բայի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, սեռը.**

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. *2*-րդ նախադասությունից դուրս գրել տրոհվող դերբայական դարձվածը և նշել՝ ինչ դիրքով է դրված.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. *8*-րդ նախադասությունից դուրս գրել *1* ուղիղ խնդիր, *1* տեղի պարագա.**

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. 6-րդ և *7*-րդ նախադասություններից դուրս գրել *2* բաղադրյալ ստորոգյալ.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. *2*-րդ նախադասություններից դուրս գրել բացահայտչի և բացահատյալի *1* օրինակ և նշել բացահայտչի տեսակը.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. *4*-րդ և *5*-րդ նախադասություններից դուրս գրել դերանվան *2* օրինակ.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. Նշել, թե տեքստի ո՞ր նախադասությունն է բարդ համադասական.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. *6*-րդ, *7*-րդ և *8*-րդ նախադասություններից ո՞րն է պարզ.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18.** Տարտամորեն **բառի համար գրել *1* հականիշ.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. *2*-րդ նախադասությունից դուրս գրել հեռացած հատկացուցչի և հատկացյալի *1* օրինակ.**

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. Ըստ կազմության ինչպիսին՞ է** նարնջակարմրավուն **բառը.**

_____

## ՄԱՍ III

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21. ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԶՄԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.5)* ԳԾԱՊԱՏԿԵՐԸ:**

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.1* Բարդ նախադասությունը փոխակերպել պարզի.**

ա) Եկել էր, որ իմանար երջանկության գաղտնիքը:

բ) Մարգարեն, որ լուռ նստած էր, խորասուզվել էր մտքերի հորձանուտում:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.2* Պարզ նախադասությունը փոխակերպել բարդի*.***

ա) Մի գաճաճ ծառ զորավիգ եղավ հոգեվարքի մեջ թպրտացող հսկային:

բ) Մեր տան առջևով ձգվող փողոցով անցնում էին ուղտեր:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.3* Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակիի*.***

ա) –Բարձանում եմ վեր,- բարբառեց նորելուկ ծառը:

բ) –Ընդունում եմ պայմանդ,- պատասխանում է Մոմիկը՝ վստահ իր ուժերին:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.4* Անուղղակի խոսքը փոխակերպել ուղղակիի*.***

ա) Մտածում էր, թե ինչպես ուղղի իր սխալը՝ առանց իր անձը վարկաբեկելու:

բ) Խմբավարն ասաց, որ իրենք արևորդիներ են, եկել են երկրպագություն անելու:

_____

_____

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ** ***21.5*** **Կազմել տրված նախադասության գծապատկերը (համարակալել նախադասությունները).**

Հազար ինը հարյուր վեց թվականն էր. Կոմիտասն ուղևորվեց Փարիզ՝ աշխարհի արվեստների մայրաքաղաք, որտեղ նրան սպասում էր ջերմ ընդունելություն: